ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N0511-24122022

ք. Երևան **«14» նոյեմբերի 2022թ.**

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արտաշես Թորոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝Կատարող, մի կողմից և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի այսուհետ՝Պատվիրատու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ 2022թ.-ի նոյեմբերի 05-ից դեկտեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածում Պատվիրատուին տրամադրել հյուրանոցային սենյակներ, այսուհետ՝ Ծառայություններ: Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են Կողմերի միջև մինչև Պայմանագրի ստորագրումը՝ 2022 թվականի նոյեմբերի 05-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ:

1.3. Հյուրանոցային սենյակների յուրաքանչյուրի գինը ներառում է նախաճաշ՝ ըստ սենյակում մնացող անձանց քանակի, ինչպես նաև նշված անձանց կողմից ինտերնետից, լողավազանից, շոգեբաղնիքից և մարզասրահից օգտվելու հնարավորություն: Ընդ որում, Կողմերն արձանագրում են, որ Հյուրանոցում մնացող անձանց կողմից նշված Ծառայություններից դուրս՝ այլ ծառայություններից օգտվելու դեպքում Պատվիրատուն պարտավորություն չի կրում դրանց վճարման համար:

1.4. Կողմերն արձանագրում են, որ Ծառայությունների մատուցման մասնավոր ժամկետները, սենյակների տեսակները (մեկտեղանոց և/կամ երկտեղանոց), Հյուրանոցում մնացող անձանց մուտքի գրանցման (check in) և դուրս գրման (check out) ամսաթվերը, ամրագրվող սենյակների քանակը, արժեքները հավելյալ ենթակա են Կողմերի միջև հաստատման՝ Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ի տեսքով:

1.5. Հյուրանոցում գրանցման ժամը 14.00-ն է, դուրսգրման ժամը՝ 12.00-ը: Սահմանված ժամից ուշ դուրսգրման դեպքում՝ մինչև 18.00 ենթակա է վճարման սենյակի արժեքի 50%-ի չափով, իսկ ժամը 18.00-ից հետո՝ մեկ ամբողջ օրվա արժեքի չափով: Եթե հյուրը գրանցվում է 03.00-ից մինչև 06.00-ն ընկած ժամանակահատվածում, ապա ենթակա է վճարման սենյակի մեկ օրվա արժեքի չափով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.2. կետում նշված ժամկետում.

2.1.3. Ապահովել հյուրանոցի տարածքում, մասնավորապես սենյակների մաքրությունը, ինչպես նաև ֆիզիկական անվտանգությունը.

2.1.4. Պատվիրատուի կողմից նախազգուշացում ստանալուց հետո՝ անհապաղ վերացնել Ծառայություններում հայտնաբերված թերությունները.

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1.Ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան:

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Պայմանագրի գործողության ողջ ընթացքում, նախորոք Կատարողին այդ մասին տեղյակ պահելով, պակասեցնել (առանց որևէ տույժի կիրառմամբ) և/կամ ավելացնել սենյակների քանակը, ինչպես նաև փոփոխել սենյակների տեսակը (երկտեղանոց/մեկտեղանոց) ըստ անհրաժեշտության

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել 70 000 000 (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամը՝ ներառյալ ԱԱՀ:

3.1.1. Պատվիրատուն պարտավոր է վճարել կանխավճար 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամի չափով՝ պայմանագիրը կնքելու օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 01-ը ներառյալ:

3.1.2. Պայմանագրի ընդհանուր արժեքի մնացած մասը Պատվիրատուն վճարում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարի չափով Ծառայություններ մատուցելուց հետո տեղեկացնել Պատվիրատուին Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափի սպառման վերաբերյալ և սույն Պայմանագրի շրջանակներում չմատուցել Ծառայություններ մինչև Կողմերի միջև գրավոր համաձայնության ձեռքբերումը: Սույն կետով սահմանված ընդհանուր կանոնը կիրառելի է նաև այն դեպքի նկատմամբ, երբ Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափը դեռևս սպառված չէ, սակայն Ծառայությունների հերթական մատուցումը կհանգեցնի սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված գնային սահմանաչափի անցման:

3.4. Պատվիրատուն Ծառայությունների դիմաց վճարում է բանկային փոխանցման միջոցով: Ծառայությունների դիմաց վճարելու Պատվիրատուի պարտավորությունը համարվում է կատարված դրամական միջոցները Պատվիրատուի բանկային հաշվից ելքագրման և Կատարողի բանկային հաշվին մուտքագրման պահին: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կրում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

3.5. Ծառայությունների մատուցման ավարտից հետո Կատարողը պարտավորվում է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը, ինչպես նաև փաստացի մատուցված Ծառայությունների վերաբերյալ այն տեղեկատվությունը, որի հիման վրա հաշվարկվում է ծառայությունների փաստացի արժեքը, այդ թվում նաև՝ հյուրանոցում սենյակ զբաղեցրած անձանց Ա.Ա.Հ., զբաղեցրած սենյակների կարգը (մեկտեղանոց/երկտեղանոց), սենյակների/գիշերների քանակը, արժեքը (տե՛ս Պայմանագրի 1.4. կետը):

3.6. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

3.7. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 3.4. կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ:

3.8. Հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը Պատվիրատուի կողմից ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից չհաստատվելու և թերությունները հիմնավորող գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում դրանք համարվում են հաստատված ներկայացման օրը:

3.9.Պայմանագրի գինը ծառայությունների ծավալի փոփոխման դեպքում ենթակա է վերանայման:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.1.1., 3.1.2. կետերով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Կատարողը կարող է հաշվարկել տույժ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ վճարման ենթակա գումարի 0.1%-ի չափով:

4.2. Կատարողի կողմից Ծառայությունները թերություններով մատուցելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Պահանջել Կատարողից վճարել տույժ՝ Պայմանագրի արժեքի 0.1%-ի չափով:

4.3. Կողմերն արձանագրում են, որ Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Հյուրանոցում մնացող անձանց կողմից Հյուրանոցին, վերջինիս պատկանող գույքին պատճառված վնասի համար

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը «ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել և որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրի շրջանակներում մատուցված Ծառայությունների վերջնական ծավալը և արժեքը հաստատվում են հանձնման-ընդունման ակտով և հաշիվ-վավերագրով:

7.2. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել սույն պայմանագիրը, այդ մասին Կատարողին նախապես 7 օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով: Այս դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է մինչև սույն պայմանագրի լուծումը փաստացի մատուցված ծառայությունները վճարը:

7.3. Կատարողը երաշխավորում և հավաստիացնում է, որ տիրապետում է և ունի սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները պատշաճ մատուցելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները:

7.4. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են երկկողմանի համաձայնությամբ:

7.5. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ՝	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա-19	ՀՀ, ք. Երևան, 0011, Գ. Հովսեփյան 26
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1930000385730100	Հ/Հ՝ 2050022082671001
ՀՎՀՀ՝ 01505315	ՀՎՀՀ՝ 01540062
Հեռ. 594500	Հեռ. 010 650015
Տնօրեն՝ Ա. Թորոյան	Գործադիր տնօրեն Հ. Մովսիսյան